ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար անխափան սնուցման աղբյուրների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02-5 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունն և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, ինչպես նաև առաջացել է Պայանագրով նախատեսված ապրանքների լրացուցիչ գնման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 3-րդ կետը հաստատվել է նոր խմբագրությամբ, պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ում նշված <<մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:>> բառերը հանվել է պայմանագրից, պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Պայմանագրի 3.1 կետում նշված «2 703 750 (երկու միլիոն յոթ հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել է «2 974 125 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ» բառերով, Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ապրանքի ընդհանուր քանակը սյունակում նշված «150» թիվը փոխարինվել է «165» թվով, ապրանքի ընդհանուր գինը/ՀՀ դրամ սյունակում նշված «2 703 750» թիվը փոխարինվել է «2 974 125» թվով, ապրանքի մատակարաման սյունակը լրացվել է նոր տողով, ինչպես նաև պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5, 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**